18-ՐԴ ՆԻՍՏ

13 սեպտեմբերի, երեկոյան ժամը 7, 1918թ.

Նիստը բանալով՝ նախագահը հայտարարում է օրակարգը՝

1. Դիլիջանում բացվելիք գանձարանի օրինագիծը.
2. Ժող. դպրոցների դիրեկցիայի վերացման օրինագիծ.
3. Օրինագիծ օրենքներ հրապարակելու մասին.
4. Ընթացիկ գործեր:

Ֆինանսական հանձնաժողովի կողմից *Ս. Տեր-Մարտիրոսյանը* զեկուցում է, որ հանձնաժողովը գտել է անհրաժեշտ Դիլիջանում գանձարան բացելու օրինագիծը:

Ա. Խոնդկարյան - Առաջարկում է այդ խնդրի քննությունը հետաձգել, որովհետև ֆրակցիաները օրինագծը քննության չեն առել: Առաջարկությունը ընդունվում է և հարցը հետաձգվում է:

Ս. Տիգրանյան - Օրենսդրական հանձնաժողովի կողմից զեկուցում է օրենքներ հրապարակելու օրինագծի մասին:

Այս օրինագծի մեջ էական է օրենքների հրապարակման գործի_կազմակերպությունը. արդյոք խորհրդարանը պե՞տք է իր սեփական օրգանն ունենա, թե օգտվի «Կառավարության լրաբեր»-ից: Երկրորդ՝ օրենքների տպագրման և սրբագրման հսկողությունը և ղեկավարումը ու՞մ ձեռքում պետք է լինի, կառավարությա՞ն, թե՞ խորհրդարանի:

Ա. Խոնդկարյան - Հայաստանի խորհրդարանն օրենքներ հրապարակելու համար հատուկ կարգ պիտի ունենա, որովհետև ռուսական կյանքում գոյություն ունեցող համապատասխան օրենքներ հրատարակող մարմին մենք չունենք: Օրենքը հետադարձ ուժ ունենալու հարցը այս օրինագծին չի վերաբերում: Օրինագծի մեջ ամենակարևոր խնդիրը չի վճռված և այն է՝ արդյոք ո՞վ է հսկելու օրենքների հրապարակմանը, նախարարը՞, թե՝ մի ուրիշը, ուստի սոց.-հեղափոխականների ֆրակցիան առաջարկում է օրինագիծը վերադարձնել համապատասխան հանձնաժողովին՝ վերամշակելու և խորհրդարան մտցնելու:

Ա. Մալխասյան - Կարիք չկա օրինագիծը հանձնաժողովին վերադարձնելու: Հրապարակող մարմնի պարտականությունը կարելի է դնել շրջանային դատարանի վրա, որն այնքան էլ գործ չունի և երկրորդ, օրենքները տեղերում պարտադիր համարել ստանալուց 3 օր հետո:

*Արդարադատության նախարար** - Օրենքներ հրապարակող համապատասխան մարմին չի ընդգծված օրինագծի մեջ: Այդ օրգանը, որի մեջ առաջարկվում է օրենքներ հրապարակել, պետք է խորհրդարանի ձեռքին լինի: Հրապարակման գործը շրջանային դատարանին հանձնելը գործնական է, բայց իրավաբանորեն անհարմար է:

Ա. Խոնդկարյան - Պնդելով իր առաջարկը ավելացնում է, որ այդ գործը դատարանին հանձնելը գործնական տեսակետից էլ անհարմար է, որովհետև այնտեղի ծառայողները հայոց լեզուն չգիտեն:

Ս. Տիգրանյան - Անհրաժեշտ է գտնում, որ խորհրդարանը մի քանի հարցերի մասին իր կարծիքը հայտնի, որպեսզի հանձնաժողովը ըստ այնմ մշակի օրինագիծը: Օրինակ՝ պե՞տք է ունենալ սեփական օրգան, թե՞ օրենքները «Կառավարության լրաբեր»-ում հրատարակել, երկրորդ, ո՞վ պետք է լինի պատասխանատու ստորագրողը և տպագրողը: Մեզանում օրենսդրական օրգանը և ձևը պարզ է, չկան սովորական և սահմանդիր օրենքների հրատարակման տարբեր կարգեր: Կարիք չկա, ուրեմն, հրապարակելիք օրենքների օրինավորության վրա հսկող մարմնի և օրենքի հրատարակելու կարգի քննություն: Պատասխանատու սրբագրման համար պետք է ունենանք պատշաճավոր պաշտոնյա. բնագիրը մնալով խորհրդարանում, ավագ քարտուղարից վավերացված պատճենը հանձնվում է տպելու: Օրենք հրապարակելու հրամանը պետք է տա խորհրդարանի նախագահը, որպես կոլեգիայի վճռի գործադրության պատասխանատու: Սրբագրությունը նույնպես պետք է հանձնել նախագահին, որը կունենա դրա համար պաշտոնյա: Արդարադատության նախարարին այդ հսկողությունը չի կարելի հանձնել, որովհետև նա վարչական մարմին է. չի կարելի հանձնել նաև շրջանային դատարանին, որովհետև դրա համար նրանք բացի այդ, չունեն հմտություն և համապատասխան պատրաստություն:

Հ. Սարգսյան - Որտեղ տպելը երկրորդական է և տեխնիկական հարց: Գլխավորն այն է, թե ո՞վ պետք է հսկի օրենքների հրապարակման գործին: Զարմանում է, որ ցանկանում են հին Ռուսաստանին նմանվել: Հեղափոխությունը վերացրեց սենատը, այնուհետև օրենքների հրապարակման տակ գործադիր կոմիտեի նախագահն էր ստորագրում: Մեզանում էլ հրապարակելու գործը պետք է հանձնել խորհրդարանի նախագահությանը:

Դ. Զուբյան - Զեկուցողի պահանջը՝ որոշ դիրեկտիվներ ստանալ խորհրդարանից, տեղին չէ: Տեխնիկական հարցերը այստեղ մշակելը հնարավոր չէ, այդ պետք է հանձնաժողովում անել: Պնդում է Խոնդկարյանի առաջարկի վրա:

Քվեարկվում է օրենքը հանձնաժողովին վերադարձնելու և վերամշակության ենթարկելու առաջարկը, որը և անցնում է 25 ձայնով:

Խորհրդարանն անցնում է ժող. դպրոցների դիրեկցիայի վերացման օրինագծի քննությանը: Զեկուցում է Ս. Տիգրանյանը, հայտնելով, որ ընդհանրապես կրթական գործի նոր կազմակերպության պատճառով տեսչությունը բնականորեն վերացվում է: Ապա անցնում է օրինագծի հոդված առ հոդված ընթերցմանը:

Ա. Խոնդկարյան - Ա. հոդվածը ավելի մանրամասն պետք է մշակել և կոնկրետ ձևով արտահայտել՝ ծառայողները ի՞նչ հիմունքներով են բավարարվելու: Ապա ծառայողներին երկու կատեգորիայի բաժանելը ընդունելով, ավելացնում է, որ պետք է նկատի ունենալ նաև նրանց ընտանեկան դրությունը և ծառայության ժամանակը: Իրենց ֆրակցիայի կողմից առաջարկում է 6 ամիս ծառայողներին, եթե դրանք ամուրի են, տալ մեկ ամսվա ռոճիկ, իսկ եթե ընտանիք ունեն, տալ՝

* Խոսքը Գր. Տեր-Պետրոսյանի մասին է:-Ծանոթ. կազմ.:

երկու ամսվա: Կրկնապատկել այս թվերը, եթե ծառայողները օտարերկրացի են: 6 ամսից ավել ծառայողներին կրկնակի վարձատրել:

Գ. Ենգիբարյան - Օրենսդրական աշխատանքները այնքան բարդ են, որ չի կարելի ամեն անգամ խորհրդարանում նոր օրենք առաջարկել: Ուստի առաջարկում է այդ աշխատանքը վերադարձնել ֆինանսական հանձնաժողովին:

Ս. Տիգրանյան - Օրինագիծը բերված է դպրոցական հանձնաժողովի կողմից: Նոր վարչություն ստեղծելով, հինը վերացվում է և ահա այդ վերացումը ընդունված ընդհանուր ձևով կատարելու առաջարկը բերվում է խորհրդարան:

Առաջարկությունները լուրջ են, գուցե և արդարացի, բայց ոչ դպրոցական հանձնաժողովի հասցեին: Այս հարցը ընդհանուր բնույթ ունի և պետք է մշակվի ֆինանսական, օրենսդրական և գուցե նաև դպրոցական հանձնաժողովի խառը նիստում. ծառայողներին վարձատրելու խնդրում մենք առաջնորդվում էինք ոչ հատուկ, այլ ընդհանուր հիմունքներով:

Արդար կլիներ դիրեկցիայի վերաբերմամբ վարվել ներկայումս տիրող կարգով և միաժամանակ ձեռնարկել այդ կարգը վերաքննելու և փոխելու՝ ապագա դեպքերի համար:

Ի. Զորին - Համաձայնելով Ս. Տիգրանյանի հետ, հայտնում է, որ ժողովրդական դպրոցների տեսչության մեջ շտատնի ծառայողը միայն ինքն է, ուստի և հարց բարձրացնելու կարիք չկա: Պետք է այսօր նեթ այդ հարցը վճռել:

Հ. Բուդաղյան - Դաշնակցական ֆրակցիայի կողմից առաջարկում է օրինագիծը հանձնել հանձնաժողովների խառը նիստին՝ վերամշակելու համար:

Ա. Խոնդկարյան - Նկատում է, որ հարցը ընդհանուր բնույթ ունի և ոչ թե անձնական, կամ միայն ժողովրդական դպրոցների տեսչությանը վերաբերող:

Պետք է մշակել ընդհանուր նորմա և կիրառել բոլոր հիմնարկությունների համար. նույնպես առաջարկում է օրինագիծը վերադարձնել հանձնաժողովների խառը նիստին:

Ֆինանսների մին - Մշակված ընդհանուր հիմունքները, որպես օրենք, այժմ գործ են ածում: Ազգային խորհուրդը հուլիսի 16-ին լիկվիդացիայի ենթարկվող հիմնարկությունների համար օրենք մշակել է, որը ուժի մեջ կմնա մինչև նոր օրենքի հրատարակելը: Չի կարելի լիկվիդացիայի ենթարկել մարմինների կյանքը և արհեստական կերպով շարունակել՝ հին օրենքը ի չիք հայտարարելով: Դա առաջ կբերի բարդություններ: Լիկվիդացիան օրենքի հրատարակման հետ չպետք է կապել:

Գ. Ենգիբարյան - Ազգային խորհրդի որոշումները առանց Հայաստանի խորհրդարանի սանկցիայի, կորցնում են իրենց նշանակությունը:

Հ. Ազատյան - Ֆրակցիայի կողմից առաջարկում է այսօրվա օրակարգի՝ ժողովրդական դպրոցական տեսչության վերացման հարցը լուծել. իսկ, ընդհանրապես, լիկվիդացիայի համար ծառայողներին բավարարելու հարցը հանձնարարել հանձնաժողովին օրինագիծ մշակել:

Հ. Բուդաղյան - Հ.Հ.Դ. ֆրակցիան ֆինանսների մինիստրի բացատրություններից հետո համաձայն է այդ հարցը այսօր քննելու:

Ա. Խոնդկարյան - Ազգային խորհուրդը օրենք հրատարակելու իրավունք չուներ, ուստի և թե՛ ֆինանսների մինիստրը և թե՛ դաշնակցական ֆրակցիան թյուրիմացության մեջ են: Մեղադրում է ֆինանսների մինիստրին, որ մինչև հիմա օրինագիծ չի մշակել լիկվիդացիայի ենթարկվող հիմնարկությունների ծառայողներին բավարարելու համար: Էջմիածնի սինոդը մինչև հիմա պահվում է Հայաստանի Հանրապետության ծախքերով, որը անտեղի է:

Այնուհետև կարդացվում է երկրորդ անգամ օրինագիծը, որից հետո քվեարկության է դրվում հետևյալ առաջարկությունը. «Հանձնարարել օրենսդրական, ֆինանսական և աշխատանքի հանձնաժողովներին, որ լիկվիդացիայի ենթարկվող հիմնարկությունների ծառայողներին բավարարելու համար մշակել մի օրինագիծ»: Անցնում է 25 ձայնով:

Հ. Ազատյան - Հայտնում է սոց.-դեմոկրատական ֆրակցիայի կողմից, որ իրենք երբեք չեն հայտարարել. թե եկել են այս հանրապետության հիմքը

քանդելու, ինչպես անցյալ անգամ պատգ. Մխիթարյանը արտահայտվեց: Մենք ևս տոգորված ենք այն խորը գիտակցությամբ, որ պետք է մեր կառավարությունն ուժեղացնել և ձգտել կովկասյան ֆեդերացիայի:

Նիստը փակվում է գիշերվա ժամը 12-ին:

«Զանգ», 24 սեպտեմբերի 1918թ.